**ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՆՍԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԵՊՀ-ՄԱԾՁԲ-26/204**

ք. Երևան «02» հունվար 2026թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՍԱՆ-ՍԱՌԱ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն Հ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կարիքների համար շրջանավարտների ավարտական տոնական միջոցառման կազմակերպման ծառայության մատուցման** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>20</u> աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19700000 (տասնինը միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ՝ այդ թվում հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 ***Պատասխանատու ստորաբաժանում՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:***

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

- Գնման հիմք՝ «Գնումների մասին» օրենք, ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 33-րդ տողը (մշակութային և (կամ) գեղարվեստաստեղծագործական միջոցառումների կազմակերպման շրջանակում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, բացառությամբ շինարարական աշխատանքների):

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ԵՊՀ» հիմնադրամ | «ՍԱՆ-ՍԱՌԱ» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | Արարատ, Արալեզ, Օրբելի 3 |
| «Արդշինբանկ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ | ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ |
| ՀՎՀՀ 01506928 | ՀՎՀՀ 04251612 |
| Հ/Հ 2470100009060000 | Հ/Հ 16008063239300 |
| պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան | Հ. Առաքելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«02» հուլիսի 2026թ. կնքված*
*ԵՊՀ-ՄԱԾՁԲ-26/204 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /մինչև/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 79951100/2 | **Անվտանգության ապահովում և թույլտվությունների ստացում:**<br><br>Միջոցառման կազմակերպման և անցկացման աշխատանքները կատարող ընկերությունը պետք է համապատասխան թույլտվություն ներկայացնի Իջևանի քաղաքապետարանից, ապահովի Շտապ օգնության առնվազն 1 հերթապահ խմբի և ոստիկանության առնվազն 1 խմբի ներկայություն՝ միջոցառման ողջ ընթացքում:<br><br>**Տեսանկարահանում, տեսանկարահանման կառավարում և տեսահոլովակի պատրաստում:**<br><br>Ռեժիսոր (1 անձ) և հեռակառավարման վահանակ:<br><br>Անհրաժեշտ է, որպեսզի ռեժիսորը հեռակառավարման վահանակի միջոցով ապահովի ուղիղ միացումներ տարածքում տեղադրված էկրանի, միացնի տվյալ պահին կատարվող կամ համապատասխան այլ կադրեր բոլոր էկրաններին (միջոցառման սցենարը և կադրերի հերթականությունը պետք է քննարկվի պատվիրատուի հետ ), ռացիաների միջոցով կապ հաստատի և պահի բոլոր օպերատորների հետ, անհրաժեշտության դեպքում նրանց տա հանձնարարություններ, ապահովի մասնակիցների իրազեկվածությունը ամբողջ միջոցառման ընթացքում: Ուղիղ եթերը չի հեռարձակվելու:<br><br>Օպերատոր 1 անձ<br><br>Օպերատորները պետք է աշխատեն սեփական տեսախցիկներով և ռացիաներով:<br><br>Հմտություններ՝ ուղիղ եթերում աշխատելու փորձ և ունակություն, որակյալ կադրերի ապահովում: Անհրաժեշտ է կապ պահել գործընկերների հետ, հետևել ռեժիսորի հրահանգներին:<br><br>Միջոցառման հաջորդ օրը բոլոր վիդեոները պետք է փոխանցել ԵՊՀ մարքեթինգի բաժնին՝ անկախ նրանից օրը աշխատանքային է, թե ոչ: Օպերատորների շրջայցի մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է նախապես հաղորդակցել ԵՊՀ մարքեթինգի բաժնի հետ:<br><br>Տեսախցիկ 3 հատ | դրամ | 19700000 | 1 | ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական 3, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ | 03 հուլիսի 2026թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Sony S3 կամ Canon 5D mark iv կամ այլ 4K նկարահանող տեսախցիկ<br><br>Անհրաժեշտ է, որպեսզի տեսախցիկները ապահովեն 4K և ավելի բարձր որակով կադրեր: 1 հատը պետք է լինի ստատիկ բեմը նկարող, որը միջոցառման ընթացքում կցուցադրվի բեմի ետնամասում տեղադրված լեդ էկրանի վրա, իսկ մնացած տեսախցիկներից կադրերը՝ ըստ ռեժիսորի հրահանգների, կցուցադրվեն տարածքում տեղադրված մնացած բոլոր էկրանների վրա:<br><br>Միջոցառման ողջ ընթացքում պետք է աշխատի դրոն՝ ,Dji inspire 2ե կամ ,Dji mavic 3ե կամ ,Yuneec Typhoon H Proե տեսակի: Աշխատող դրոնների քանակը՝ 1 հատ: Պետք է տեսանկարահանի ամբողջ միջոցառումը, որի կադրերը պետք է օգտագործվեն միջոցառման մասին պատմող հոլովակում:<br><br>Լուսանկարիչ 2 անձ<br><br>Յուրաքանչյուրը պետք է աշխատի 8 ժամ: Լուսանկարահանումը պետք է իրականացնել Sony S3 կամ Canon 5D mark iv տեսակի ֆոտոխցիկներով:<br><br>Լուսանկարիչները պետք է ունենան աշխատանքային երկարամյա փորձ, աշխատեն սեփական տեխնիկայով:<br><br>Լուսանկարիչների պորտֆոլիոները պետք է ուղարկվեն ԵՊՀ մարքեթինգի բաժնին, որոնցից կընտրվեն լավագույնները:<br><br>Միջոցառման օրը պետք է ԵՊՀ մարքեթինգի բաժնին փոխանցվի լուսանկարների մի մասը՝ պատվիրատուն նախապես կտեղեկացնի, թե որ լուսանկարների մասին է խոսքը՝ միջոցառման օրը սոցիալական հարթակներում հրապարակումներ անելու համար, իսկ մնացած լուսանկարները՝ միջոցառման հաջորդ օրը՝ անկախ նրանից՝ օրն աշխատանքային է, թե ոչ, պետք է հանձնել առանձին կրիչով:<br><br>Հոլովակներ 1 հատ<br><br>Միջոցառման օրվանից երեք աշխատանքային օր հետո նկարահանող թիմը 2-3 րոպե տևողությամբ մոնտաժված հոլովակ պետք է տրամադրի: Հոլովակի միջոցով պետք է ներկայացվի այն ամենը, ինչ կատարվել է միջոցառման ողջ օրվա ընթացքում: Հոլովակում պետք է ներառված լինեն ինչպես գրաֆիկական, այնպես էլ տեսախցիկով և դրոնով նկարահանված կադրեր (հոլովակը պետք է հաստատվի ԵՊՀ մարքեթինգի բաժնի կողմից): Այս հոլովակը ստանալու համար անհրաժեշտ է կազմել առանձին սցենար, նկարահանել հոլովակը, օրինակ միջոցառմանը եկած ուսանողի աչքերով ներկայացվի միջոցառումը, Հետևաբար առանձին աշխատանքային խումբ պետք է աշխատի այս հոլովակը ստանալու համար, որտեղ կօգտագործվեն միջոցառումից կադրեր: Այս հոլովակի համար անհրաժեշտ է ընտրել հերոսներ՝ նկարահանվող անձինք, կազմել առանձին սցենար, ներգրավել օպերատորներ և անհրաժեշտ տեխնիկա, բարձրախոսեր՝ ձայն գրելու համար և այլն: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Ռացիա 10 հատ**<br><br>Արդյունավետ և օպերատիվ ներքին հաղորդակցություն ապահովելու համար անհրաժեշտ են հզոր ռացիաներ՝ լիցքավորիչներով, գոտու ամրակով, ձեռքին ամրացնելու թելով: Ռացիաների անխափան աշխատանքի շնորհիվ պետք է մշտապես կապ ապահովվի ինչպես ԵՊՀ շենքի ներսում, այնպես էլ համալսարանի ողջ տարածքում:<br><br>**Էկրան և դրա տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ՝**<br><br>Անհրաժեշտ են առնվազն չորս մետր բարձրությամբ և  առնվազն վեց մետր երկարությամբ՝ մեկ հատ ջրակայուն լեդ էկրան բեմի ետնամասում, 4 հատ  մեկ մետր լայնությամբ և 4 մետր բարձրությամբ լեդ էկրան բեմի դիմային հատվածում որը պետք է տեղադրվի համապատասխան ֆերմայի վրա: 2.9 մմ կամ ավելի փոքր պիքսելի չափսով: լեդ էկրանի մասնագետ 2 անձ, միջոցառման ողջ ընթացքը սպասարկելու համար:<br><br>**Տեխնիկայի սպասարկում**<br><br>Ծառայություն մատուցողը պետք է ապահովի նշված ծառայության ձեռքբերման շրջանակում անհրաժեշտ տեխնիկական միջոցների ու սարքավորումների շահագործումը, այդ թվում՝ մարդկանց համակազմը, որոնք կատարելու են լուսա- և տեսանկարահանումները, կատարելու են լայվ միացումները, միացնելու են նշված բոլոր տեխնիկական միջոցները և օգտագործելու են դրանք: Մասնավորապես պետք է ապահովվեն անհրաժեշտ տրանսպորտային միջոցները՝ սարքավորումները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ տեղափոխելու և միջոցառումից հետո վերադարձնելու համար:<br><br>**Փորձ**<br><br>Միջոցառման տևողությունը ժամը՝ 17:00-22:45-ն է: Միջոցառումից 24  ժամ առաջ պետք է կատարվի տեխնիկայի տեղադրում, անցկացվի համերգի գլխավոր փորձը բուն միջոցառումի մեկնարկից առնվազն 5 ժամ առաջ:<br><br>Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է տրամադրել սարքավորումներ ու տեխնիկական միջոցներ, ինչպես նաև ձեռք բերել սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ:<br><br>**1.Բեմ:  6*8 մ**<br><br>ձայնային համակարգը պետք է այնպես մոնտաժվի, որ բեմի կողային հատվածները դինամիկներով չփակվեն, որպեսզի բեմի վիզուալ գեղեցիկ տեսքը ապահոված լինի, պոստերները երևան: 1 քմ-ի վրա առնվազն 200 կգ ծանրությանը դիմացող, 48 քմ ընդհանուր մակերեսով: Բեմը պետք է ծածկված լինի կավրոլինով՝ սահելուց խուսափելու համար: Կավրոլինի գույնն ու տեսքը սահմանվում է ընդհանուր միջոցառման ոճին համապատասխան, համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Բեմը պետք է ունենա աստիճաններ և պատնեշներ բոլոր կողմերից: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Համերգային բեմը պետք է բաղկացած լինի ալյումինե կոնստրուկցիաներից, ունենա ռետինե հատակ՝ հետևյալ հիմնական տեխնիկական բնութագրիչներով.<br><br>՝ լայնություն՝ առնվազն 8մ,<br><br>խորություն՝ առնվազն 6մ,<br><br>բարձրություն՝ 80սմ – 120սմ (համապատասխան աստիճանով), անձրևից-արևից պաշտպանող ծածկ՝ վրան:<br><br>Բեմը պարտադիր պետք է լինի ծածկով, իսկ ձայնային ակուստիկան կառուցված լինի այնպես, որպեսզի ապահովի ձայնը:<br><br>Այս հարթակը պետք է ունենա անձրևից և արևից պաշտպանիչ ծածկ:<br><br>**2.Ֆերմաներ**՝ լուսային և այլ սարքերի համար: Ֆերմաները պետք է լինեն ալյումինե և համապատասխանեն հետևյալ հիմնական չափանիշներին. կենտրոնական ֆերմա, լայնություն՝ առնվազն 8/8մ, բարձրություն՝ առնվազն 5մ<br><br>**3.Համերգի համար լուսային սարքավորումների համակարգ** (օրինակ՝ բաղկացած հետևյալ սարքերից)՝<br><br>1.1.Beam spot wash moving headlight CMI 20R - 10 հատ<br><br>1.2. Beam 7R – 20 հատ<br><br>1.3. LED WASH 6X40 - 10 հատ<br><br>1.4. LED COB սովորական - 20 հատ<br><br>***Միջոցառման կազմակերպման անձնակազմ:***<br><br>Միջոցառման անխափան կազմակերպման համար Կատարողը պետք է ապահովի ստորև մասնագետների ներկայությունը՝<br><br>1. Լուսաձայնային տեխնիկական անձնակազմ.<br><br>1.1. Տեխնիկական ղեկավար - 1 անձ<br><br>1.2. ԼԵԴ էկրանների կառավարման մասնագետ - 1 անձ<br><br>1.3.Լուսային սարքավորումների կառավարման մասնագետ - 2 անձ<br><br>1.4. Ձայնային համակարգի կառավարման մասնագետ - 2 անձ<br><br>1.5.Տեխնիկական սպասարկող անձնակազմ - 5 անձ<br><br>1.6. Ձայնային տեխնիկական անձնակազմ – 5 անձ<br><br>1.7. Ձայնային ինժեներ և օպերատոր / Sound engineer and operator/ - 1 անձ<br><br>2. Տեսանկարահանման անձնակազմ՝<br><br>2.1. Օպերատոր՝ 3 անձ,<br><br>2.2. Ռեժիսոր՝ 1 անձ | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2.3. Դրոնով նկարահանող/ղեկավարող մարդ՝ 1 անձ,<br><br>2.4. Տեխնիկական սպասարկող անձնակազմ՝ 4 անձ<br><br>**Ձայնային համակարգերի ապահովում:**<br><br>Կատարողը պարտավոր է միջոցառումը կազմակերպել հետևյալ տեխնիկական պարամետրեր ունեցող ձայնային համակարգերով՝<br><br>●Բարձրախոս իր կանգնակով Fidek 212 A կամ JBL EON615 – 6 հատ<br><br>●Passive Subwoofer 40-400 GHz, 140dB, 4800W - 6 հատ Electro-Voice կամ համարժեք<br><br>●Passive acoustic system 139dB, 54Hz-17KHz, 8ohm, 2000W, Tri-amp mode - 12 հատ<br><br>●Stage monitor sytem for musicians Fidek FMS 115 կամ JBL EON610 կամ Yamaha DBR10 – 8 հատՊետք է  ապահովել Ինչպես նաև ելույթունեցող արտիստների համար անհրաժեշտ տեխնիկական ռայդերները:<br><br>**Երաժշտություն-համերգ:**<br><br>Կատրողը պարտավոր է ապահովել  Նեմրա բենդի և DJ SMOK-ի ներկայությունը, յուրաքանչյուրը  առնվազն 60 րոպե ելույթով: Միջոցառման երաժշտական մասը տևելու է առավելագույնը 3 ժամ:<br><br>**Նկարվելու հարթակներ**<br><br>Պետք է ունենալ մեկ հատ 360 աստիճան **ֆոտոզոնա**, մեկ  հատ **Photobooth** (լուսանկարվելու հարթակ, որը կա՛մ անմիջապես տրամադրում է տպված լուսանկարները, կա՛մ ուղարկում է էլեկտրոնային տարբերակով) միջոցառման նշումներով: Այստեղ պետք է ապահովել համապատասխան լուսավորություն, դիզայն, տպագրություն, լույս, երկարացման լարեր անհրաժեշտ քանակով:<br><br>Անհրաժեշտ պարագաները, տեղափոխումը և կառուցապատումը պետք է իրականացվեն կատարողի կողմից:<br><br>Ֆոտոզոնաները և Photobooth-երը պետք է տեղադրված լինեն միմյանցից այնքան հեռավորության վրա, որպեսզի հերթեր և կուտակումներ չառաջանան:<br><br>Ֆոտոզոնաները և ֆոտոբութերը պետք է լինեն ԵՊՀ բրենդային դիզայնով, տպագրված ֆոտոները ևս պետք է լինեն ԵՊՀ դիզայնով :<br><br>**Նկարվելու համար անհրաժեշտ են շրջանավարտների թեմատիկայով տարբեր ատրիբուտներ,** որոնք կվերցնեն շրջանավարտները, կնկարվեն: Դրանց դիզայնը, տպագրությունը պետք է կատարի հաղթող կազմակերպությունը, դիզայնի հաստատումը տալու է ԵՊՀ մարքեթինգի բաժինը, մինչև տպագրության և ատրիբուտները պատրաստելու ուղարկելը անհրաժեշտ է ստանալ Մարքեթինգի բաժնի գրավոր համաձայնությունը, որ հաստատված են | | | | | | |

տպագրության, այլապես հնարավոր է, որ տպարգրված ապրանքները ԵՊՀ-ն չընդունի և հաղթող կազմակերպությունը նորից դիզայն անի և տպարգրի ամբողջը, կատարի կրկնակի ծախս:

Կատարողը պետք է տրամադրի 10 հատ միատոն սպիտակ վրաններ, տեղափոխումը և կառուցապատումը պետք է իրականացվեն կատարողի կողմից:

**Ֆուրշետ**

*50* հոգու համար պետք է լինի ֆուրշետ:

Մենյուն ներկայացված է մեկ անձի հաշվարկով, յուրաքանչյուր անձի համար պետք է նախատեսված լինի առնվազն երեք հատ ստորև նշված յուրաքանչյուր սննդից:

| N: | Անվանում | Քանակ |
|---|---|---|
| 1. | Կանապե հոլանդական պանրով, 25 գրամ | 1 հատ |
| 2. | Կանապե ռոքֆոր պանրով, 25 գրամ | 1 հատ |
| 3. | Կանապե ֆիլեով, 25 գրամ | 1 հատ |
| 4. | Կանապե կարմիր ձկնկիթով, 25 գրամ | 1 հատ |
| 5. | Կանապե սաղմոնով, 25 գրամ | 1 հատ |
| 6. | Բրուսկետա լոլիկով, 25 գրամ | 1 հատ |
| 7. | Հավով և սնկով ժուլիեն, 25 գրամ | 1 հատ |
| 8. | Աղցան հավի կրծքամսով՝ հացուտիկի մեջ, 30 գրամ | 1 հատ |
| 9. | Աղցան ծովախեցգետնով հացուտիկի մեջ, 30 գրամ | 1 հատ |
| 10. | Խորոված խոզի միս՝ փայտիկի վրա, 80 գրամ | 1 հատ |
| 11. | Խորոված հավի միս՝ փայտիկի վրա, 80 գրամ | 1 հատ |
| 12. | Լավաշ, 25 գրամ | 2 հատ |
| 13. | Մինի տավարի քաբաբ փայտիկի վրա, 50 գրամ | 1 հատ |
| 14. | Ձիթապտղի կոմպոզիցիաներ /բաժին 150 գրամ/ | 20 գր |
| 15. | Մրգային կոմպոզիցիաներ /բաժին 150 գրամ/ | 20 գր |
| 16. | Ֆուրշետային թխվածքներ(տիրամ իսու, մրջնաբույն, փախլավա, էկլեր40 գրամ հատը | 3 հատ |
| 17. | Գինի (անապակ, կարմիր), 200 գր | 1 գավաթ |
| 18. | Գինի (անապակ, սպիտակ), 200 գր | 1 գավաթ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գինի (անապակ, սպիտակ, փրփրուն) 200 գր | | | | | |
| | | 19. | Կոնյակ (հայկական ոչ պակաս քան 7 տարվա հնեցման) | 1 գավաթ | | | | |
| | | 20. | Աղբյուրի ջուր /100 գր/ | 1շիշ | | | | |
| | | 21. | Բնական հյութ /100 գր/ նարինջ, կանաչ խնձոր, մուլտի, ինչպես նաև կոմպոտներ | 1 բաժակ | | | | |
| | | 22. | Սև սուրճ և լուծվող սուրճ, ինչպես նաև տաք կաթ, նախատեսված սուրճի համար 100 գր | 1բաժա կ | | | | |
| | | 23. | Սև և կանաչ, թեյ, 100 գր | 1բաժա կ | | | | |
| | | 24. | Կոլա, ֆանտա, Սպրայտ 125 գր | 1 հատ | | | | |
| | | **Սպասարկում՝** առնվազն 2 անձ | | | | | | |

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**«ԵՊՀ» հիմնադրամ**
**ք. Երևան, Ալեք Մանուկյան 1**
**«Արդշինբանկ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**
**ՀՎՀՀ 01506928**
**Հ/Հ 2470100009060000**
**պրոռեկտոր՝ Ա. Գ. Մախասյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ՍԱՆ-ՍԱՌԱ» ՍՊԸ**
**Արարատ, Արալեզ, Օրբելի 3**
**ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ**
**ՀՎՀՀ 04251612**
**Հ/Հ 16008063239300**
**Հ. Առաքելյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 02 » հուլիսի 2026թ. կնքված*
*ԵՊՀ-ՄԱԾՁԲ-26/204 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79951100/2 | ԵՊՀ ԻՄ շրջանավարտների ավարտական տոնական միջոցառման կազմակերպական ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 19700000 | 19700000 | 19700000 | 19700000 | 19700000 | 19700000 | 19700000 |

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**«ԵՊՀ» հիմնադրամ**
**ք. Երևան, Ալեք Մանուկյան 1**
**«Արդշինբանկ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**
**ՀՎՀՀ 01506928**
**Հ/Հ 2470100009060000**
**պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ՍԱՆ-ՍԱՌԱ» ՍՊԸ**
**Արարատ, Արալեզ, Օրբելի 3**
**ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ**
**ՀՎՀՀ 04251612**
**Հ/Հ 16008063239300**
**Հ. Առաքելյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*«    »        20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «          » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »  «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »       20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը  Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն